

Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխություն

Հոդված 1. Փոփոխություն

Ա. Կիոտոյի արձանագրության Բ հավելված

Արձանագրության Բ հավելվածի աղյուսակը փոխարինել հետևյալ աղյուսակով.

1	2	3	4	5	6
Կողմը	Արտանետումների սահմանափակման կամ կրճատման քանակական պարտավորություն (2008–2012 թթ.), (% բազային տարվա կամ ժամանակաշրջանի համեմատությամբ)	Արտանետումների սահմանափակման կամ կրճատման քանակական պարտավորություն (2013–2020 թթ.), (% բազային տարվա կամ ժամանակաշրջանի համեմատությամբ)	բազային տարի ¹	Արտանետումների սահմանափակման կամ կրճատման քանակական պարտավորություն (2013–2020 թվականներ), (% բազային տարվա Համեմատությամբ) ¹	մինչև 2020 թվականը ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու հանձնառություն (% բազային տարվա համեմատությամբ ²)
Ավստրալիա	108	99.5	2000	98	-5-ից մինչև -15% կամ -25% ³
Ավստրիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Բելառուս ^{5*}		88	1990	ԱԿ	-8%
Բելգիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Բուլղարիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Խորվաթիա*	95	80 ⁶	ԱԿ	ԱԿ	-20%-30% ⁷

*Երկրներ, որոնք անցում են շուկայական տնտեսության:

Կիպրոս		80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Չեխիայի Հանրապետություն*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Դանիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Էստոնիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Եվրոպական միություն	92	80 ⁴	1990	ԱԿ	-20%-30% ⁷
Ֆինլանդիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Ֆրանսիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Գերմանիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Հունաստան	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Հունգարիա*	94	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Իսլանդիա	110	80 ⁸	ԱԿ	ԱԿ	
Իռլանդիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Իտալիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Ղազախստան		95	1990	95	-7%
Լատվիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Լիխտենշտայն	92	84	1990	84	-20%-30% ⁹
Լիտվա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Լյուքսեմբուրգ	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Մալթա		80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Մոնակո	92	78	1990	78	-30%
Նիդերլանդներ	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Նորվեգիա	101	84	1990	84	-30%-40% ¹⁰
Լեհաստան*	94	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Պորտուգալիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Ռումինիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Սլովակիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Սլովենիա*	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Իսպանիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Շվեդիա	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Շվեյցարիա	92	84.2	1990	ԱԿ	-20%-30% ¹¹
Ուկրաինա*	100	76 ¹²	1990	ԱԿ	-20%-
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	92	80 ⁴	ԱԿ	ԱԿ	
Կանադա ¹³	94				

Ճապոնիա ¹⁴	94				
Նոր Ջեիանդիա ¹⁵	100				
Ռուսաստանի Դաշնություն ^{16*}	100				

ԱԿ հապավումը նշանակում է անկիրառելի:

Տողատակի բոլոր ներքոնշյալ հղումները, բացառությամբ 1-ին, 2-րդ և 5-րդ հղումների, ստացվել են համապատասխան Կողմերի հաղորդագրությունների միջոցով:

¹⁴ Կողմը կարող է օգտագործել բազային տարին ֆակուլտատիվ հիմքով, իր սեփական նպատակների համար՝ արտահայտելու համար արտանետումների սահմանափակման կամ կրճատման իր քանակական պարտավորությունները (ԱՄԿԲՊ) որպես արտանետումների բաժնեչափ այդ տարվա համար, որը, ըստ Կիոտոյի արձանագրության, չի կրում միջազգայնորեն պարտադիր բնույթ, ի լրումն սույն աղյուսակի երկրորդ և երրորդ սյունակներում բազային տարվա համեմատությամբ բերվող ԱՄԿԲՊ(ներ)-ի, որը միջազգային մակարդակով իրավաբանորեն պարտադիր է:

² Հանձնառությունների մասին լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել FCCC/SB/2011/INF.1/Rev.1 և FCCC/KP/AWG/2012/MISC.1, Add.1 և Add.2. փաստաթղթերում:

³ Ըստ Կիոտոյի արձանագրության երկրորդ ժամանակահատվածի պարտավորությունների՝ Ավստրալիայի ԱՄԿԲՊ-ն համապատասխանում է Ավստրալիայի կողմից այն պարտավորության անվերապահորեն կատարմանը, որի նպատակն է 2020 թվականին հասնել մի ցուցանիշի, որը 2000 թվականի մակարդակից ցածր է 5%-ով: Եթե կատարվեն որոշակի պայմաններ, ապա Ավստրալիան պահպանում է իր հնարավորությունը հետագայում 2020 թվականի իր նպատակային ցուցանիշը 2000 թվականի մակարդակի համեմատությամբ մեծացնել 5-ից մինչև 15 կամ 25 %-ով ցածր: Սույն հղումը ցույց է տալիս այն հանձնառությունների վիճակը, որոնք կատարվել են Կանկունի պայմանավորվածություններով և, ըստ սույն Արձանագրության կամ դրա հետ կապված կանոնների և պայմանների, նոր՝ իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ չեն համարվում:

⁴ Ըստ Կիոտոյի արձանագրության երկրորդ ժամանակահատվածի պարտավորությունների, Եվրամիության և նրա անդամ պետությունների ԱՄԿԲՊ-ն հիմնվում է այն ըմբռնման վրա, որ դրանք պետք է իրականացվեն Եվրամիության և նրա անդամ պետությունների հետ համատեղ՝ համաձայն Կիոտոյի արձանագրության 4-րդ հոդվածի: ԱՄԿԲՊ-ն չի խոչընդոտում Եվրամիության և նրա անդամ պետությունների կողմից հետագայում ծանուցել, որ նրանք համաձայնություն ունեն իրենց պարտավորությունները կատարել համատեղ՝ համաձայն Կիոտոյի արձանագրության դրույթների:

⁵ Բ Հավելվածը լրացվել է 10/CMP.2 որոշման համաձայն ընդունված փոփոխությամբ: Այս փոփոխությունը դեռևս ուժի մեջ չի մտել:

⁶ Ըստ Կիոտոյի արձանագրության գործողության երկրորդ ժամանակահատվածի պարտավորությունների՝ Խորվաթիայի ԱՄԿԲՊ-ն հիմնվում է այն ըմբռնման վրա, որ Խորվաթիան դրանք կիրականացնի Եվրամիության և նրա անդամ պետությունների հետ համատեղ՝ համաձայն Կիոտոյի արձանագրության 4-րդ հոդվածի: Հետևաբար, Խորվաթիայի անդամակցությունը Եվրամիությանը չպետք է անդրադառնա նրա մասնակցությանը՝ 4-րդ հոդվածի համաձայն համատեղ կատարման մասին այդ համաձայնության վրա կամ նրա ԱՄԿԲՊ-ի վրա:

⁷ Որպես համընդհանուր և համապարփակ համաձայնության մաս, 2012 թվականից հետո ժամանակահատվածի համար, Եվրամիությունը վերահաստատում է 2020 թվականին 1990 թվականի մակարդակի համեմատությամբ 30%-ով նվազեցնելու մասին իր պայմանական առաջարկը՝ պայմանով, որ մյուս զարգացած երկրները կապահովեն արտանետումների համադրելի կրճատման պարտավորություն, իսկ զարգացող երկրները կկատարեն իրենց պատասխանատվությանը և համապատասխան հնարավորություններին համարժեք ներդրում:

⁸ Ըստ Կիոտոյի արձանագրության գործողության երկրորդ ժամանակահատվածի պարտավորությունների՝ Իսլանդիայի ԱՍԿՔՊ-ն հիմնվում է այն ըմբռնման վրա, որ Իսլանդիան դրանք կիրականացնի Եվրամիության և նրա անդամ պետությունների հետ համատեղ՝ համաձայն Կիոտոյի արձանագրության 4-րդ հոդվածի:

⁹ 3-րդ սյունակում նշված ԱՍԿՔՊ-ն վերաբերում է 1990 թվականի մակարդակի համեմատությամբ 2020 թվականին 20%-ով կրճատելու նպատակային ցուցանիշին: Լիխտենշտայնը կքննարկի 1990 թվականի մակարդակի համեմատությամբ 2020 թվականին մինչև 30%-ով կրճատելու նպատակային ցուցանիշին հասնելու հնարավորությունը՝ պայմանով, որ մյուս զարգացած երկրները կստանձնեն արտանետումների կրճատման համադրելի պարտավորություններ, և եթե տնտեսապես առավել առաջացած զարգացող երկրները կկատարեն իրենց պատասխանատվությանը և համապատասխան հնարավորություններին համարժեք ներդրում:

¹⁰ Նորվեգիայի 84-ի չափով ԱՍԿՔՊ-ն համապատասխանում է 2020 թվականին 1990 թվականի համեմատությամբ արտանետումները 30%-ով կրճատելու նպատակային ցուցանիշին: Եթե նա կարողանա նպաստել համընդհանուր և համապարփակ համաձայնության հասնելուն, որի շրջանակներում արտանետումների աղբյուր հանդիսացող հիմնական երկրները կհամաձայնեն կրճատելու արտանետումներն այնքանով, որը համապատասխանում է 2^o C նպատակային ցուցանիշին, ապա Նորվեգիան 2020 թվականին 1990 թվականի մակարդակի համեմատությամբ նպատակային ցուցանիշը կբարձրացնի մինչև 40%: Այս հղումը պահպանում է Կանկունի պայմանավորվածությունների շրջանակում ստանձնած հանձնառության կարգավիճակը և չի դիտարկվում որպես սույն Արձանագրությամբ ստանձնած իրավաբանական պարտադիր նոր պարտավորություն:

¹¹ Սույն աղյուսակի 3-րդ սյունակում նշված ԱՍԿՔՊ-ն վերաբերում է 1990 թվականի մակարդակի համեմատությամբ 2020 թվականին 20%-ով կրճատելու նպատակային ցուցանիշին: Շվեյցարիան կարող է դիտարկել 2020 թվականին արտանետումների նպատակային ցուցանիշը 1990 թվականի մակարդակի համեմատությամբ ընդհուպ մինչև 30% բարձրացնելու հարցը՝ պայմանով, որ դա համադրելի լինի այլ զարգացած երկրների կողմից արտանետումների կրճատման ստանձնած պարտավորություններին և համարժեք լինի զարգացող երկրների նպաստին՝ իրենց 2^o C նպատակային ցուցանիշի գծով պատասխանատվության և համապատասխան հնարավորությունների համաձայն: Այս հղումը պահպանում է Կանկունի պայմանավորվածությունների շրջանակում ստանձնած հանձնառության կարգավիճակը և չի դիտարկվում որպես սույն Արձանագրությամբ կամ դրա հետ կապված կանոններով և պայմաններով ստանձնած իրավաբանական պարտադիր նոր պարտավորություն:

¹² Ենթակա է լիարժեք կատարման, և օրինականորեն ձեռք բերված ինքնիշխան սեփականության օգտագործման համար որևէ չեղարկում կամ սահմանափակում անընդունելի է:

¹³ 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ավանդապահն ստացել է Կիոտոյի արձանագրությունից դուրս գալու մասին Կանադայի գրավոր ծանուցումը: Այն Կանադայի համար ուժի մեջ կմտնի 2012 թվականի դեկտեմբերի 15-ից:

¹⁴ 2010 թվականի դեկտեմբերի 10-ի հաղորդագրությամբ Ճապոնիան նշել է, որ 2012 թվականից հետո մտադրություն չունի ստանձնելու արևելյան պարտավորություն Կիոտոյի արձանագրության գործողության երկրորդ ժամանակահատվածի համար:

¹⁵ Նոր Զելանդիան շարունակում է մնալ Կիոտոյի արձանագրության Կողմ: Նոր Զելանդիան կսահմանի արտանետումների կրճատման որոշակի նպատակային ցուցանիշ 2013-2020 թվականների ժամանակահատվածի համար ամբողջ տնտեսության մասշտաբով՝ Կլիմայի փոփոխության մասին Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի շրջանակներում:

¹⁶ 2010 թվականի դեկտեմբերի 8-ով թվագրված հաղորդագրությամբ, որը Քարտուղարությունն ստացել է 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, Ռուսաստանի Դաշնությունը նշել է, որ պարտավորությունների երկրորդ ժամանակահատվածի համար մտադիր չէ ստանձնելու արտանետումների սահմանափակման կամ կրճատման քանակական պարտավորություն:

Բ. Կիտոյի արձանագրության Ա հավելված

Ստորև բերվող ցուցակը կփոխարինի Արձանագրության Ա հավելվածում «Զերմոցային գազեր» ենթավերնագրերի ներքո գետեղված ցուցակին.

Զերմոցային գազեր

ածխածնի երկօքսիդ (CO_2)
մեթան (CH_4)
ազոտի ենթօքսիդ (N_2O)
հիդրոֆտորածխաջրածիններ (ՀՖԱ)
պերֆտորածխաջրածիններ (ՊՖԱ)
ծծմբի հեքսաֆտորիդ (SF_6)
ազոտի եռֆտորիդ (NF_3)¹

Գ. Հոդված 3, կետ 1 bis

Արձանագրության 3-րդ հոդվածի 1-ին կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

1bis. 1-ին հավելվածում ներառված Կողմերն անհատականորեն կամ համատեղ ապահովում են, որ Ա հավելվածում թվարկված ջերմոցային գազերի ածխածնի երկօքսիդի համարժեքով արտահայտված իրենց համատեղ

¹ Կիրառվում է միայն պարտավորությունների երկրորդ ժամանակահատվածի սկզբից:

արտանետումները չգերազանցեն նրանց համար սահմանված այն քանակները, որոնք հաշվարկվել են Բ հավելվածում նշված աղյուսակի երրորդ սյունակում ներառված արտանետումների սահմանափակման և կրճատման՝ իրենց քանակական պարտավորությունների հիման վրա և սույն հոդվածի դրույթների համաձայն՝ 2013-2020 թվականների պարտավորությունների ժամանակահատվածում այդ գազերի

ընդհանուր արտանետումները 1990 թվականի մակարդակից առնվազն 18%-ով ցածր նվազեցնելու նպատակով:

Դ. Հոդված 3, կետ 1 ter

Արձանագրության 3-րդ հոդվածի 1 bis կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

1 ter. Բ հավելվածում ներառված Կողմը կարող է ուղղում առաջարկել Բ հավելվածի երրորդ սյունակում նշված տոկոսային մասնաբաժնի իջեցման նպատակով Բ հավելվածում բերված աղյուսակի երրորդ սյունակում նշված իր արտանետումների քանակական սահմանափակման կամ կրճատման պարտավորության մասով: Ուղղում կատարելու մասին այդպիսի առաջարկությունը քարտուղարությունը պետք է փոխանցի Կողմերին՝ որպես Արձանագրության Կողմերի հանդիպում գործող Կողմերի Համաժողովի այն հանդիպումից առնվազն երեք ամիս առաջ, որտեղ առաջարկվում է ընդունել ուղղումը:

Ե. Հոդված 3, կետ 1 quater

Արձանագրության 3-րդ հոդվածի 1 ter կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

1 quater. Վերոհիշյալ 3-րդ հոդվածի 1 ter կետի համաձայն արտանետումների սահմանափակման կամ կրճատման իր քանակական պարտավորությունը բարձրացնելու նպատակով 1-ին հավելվածում ընդգրկված Կողմի առաջարկած ուղղումը համարվում է ընդունված որպես Արձանագրության Կողմերի հանդիպում գործող Կողմերի համաժողովի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե ներկա գտնվող և քվեարկող Կողմերի ավելի քան երեք քառորդը դրա ընդունման դեմ է: Ընդունված ուղղումը քարտուղարությունը փոխանցում է ավանդապահին, որն էլ այն փոխանցում է Կողմերին: Ուղղումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից փոխանցվելու հաջորդ տարվա հունվարի 1-ից: Այդպիսի ուղղումները Կողմի համար պարտադիր են:

Զ. Հոդված 3, կետ 7 bis

Արձանագրության 3-րդ հոդվածի 7-րդ կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

7 bis. արտանետումների սահմանափակման կամ կրճատման պարտավորության երկրորդ ժամանակահատվածի ընթացքում՝ 2013-ից մինչև 2020 թվականը, 1-ին հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմի համար սահմանված քանակը Բ հավելվածում բերված աղյուսակի երրորդ սյունակում նշված տոկոսային մասնաբաժնով պետք է հավասարվի Ա հավելվածում թվարկված ջերմոցային գազերի ընդհանուր մարդածին արտանետումների՝ ածխածնի երկօքսիդով արտահայտված՝ իր համար սահմանված համարժեքին՝ հաշվարկված 1990 թվականի համար կամ բազային տարում կամ այն ժամանակահատվածում, որը որոշվում է վերը նշված 5-րդ կետի համաձայն՝ բազմապատկած ութով: 1-ին հավելվածում ընդգրկված այն Կողմերը, որոնց համար 1990 թվականին ջերմոցային գազերի արտանետումների աղբյուրները եղել են զուտ հողօգտագործման և անտառտնտեսության բնագավառում փոփոխությունները, իրենց համար սահմանված քանակը հաշվարկելու նպատակով պետք է ներառեն 1990 թվականի արտանետումների բազային տարում կամ ժամանակահատվածում ածխածնի երկօքսիդով արտահայտված համարժեք աղբյուրներից ընդհանուր մարդածին արտանետումները՝ հանելով 1990 թվականին հողօգտագործման փոփոխությունների արդյունքում կլանիչների կողմից արտրբցիան:

Է. Հոդված 3, կետ 7 ter

Արձանագրության 3-րդ հոդվածի 7 bis կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

7 ter. 1-ին հավելվածում ընդգրկված Կողմի համար պարտավորությունների երկրորդ ժամանակահատվածում սահմանված քանակի և պարտավորությունների նախորդ ժամանակահատվածի առաջին երեք տարվա ամենամյա միջին արտանետումների միջև ցանկացած դրական տարբերություն բազմապատկվում է ութով և պետք է փոխանցվի այդ Կողմի համար չեղյալ համարված արտանետումների քանակի հաշվին:

Ը. Հոդված 3, կետ 8

Արձանագրության 3-րդ հոդվածի 8-րդ կետում՝
«վերը՝ 7-րդ կետում նշված հաշվարկի» բառերը փոխարինել հետևյալով.
«վերը՝ 7-րդ և 7 bis կետերում նշված հաշվարկների»:

Թ. Հոդված 3, կետ 8 bis

Արձանագրության 3-րդ հոդվածի 8-րդ կետից հետո ավելացնել հետևյալ կետը.

8 bis. 1-ին հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ կարող է օգտագործել 1995 կամ 2000 թվականը որպես բազային տարի՝ ազոտի եռֆտորիդի համար վերոհիշյալ 7 bis կետում նշված հաշվարկների կատարման նպատակով:

Ժ. Հոդված 3, կետեր 12 bis և ter

Արձանագրության 3-րդ հոդվածի 12-րդ կետից հետո ավելացնել հետևյալ կետերը.

12 bis. Կոնվենցիայի կամ դրա գործիքների հիման վրա ստեղծված շուկայական մեխանիզմների գործողության շնորհիվ ստացված ցանկացած միավոր կարող է օգտագործվել 1-ին հավելվածում ընդգրկված Կողմերի կողմից, որպեսզի նրանք օժանդակեն 3-րդ հոդվածի համաձայն արտանետումների սահմանափակման կամ կրճատման իրենց քանակական պարտավորության կատարմանը: Ցանկացած այդպիսի միավոր, որը Կողմ ձեռք է բերում Կոնվենցիայի այլ Կողմից, պետք է ավելացվի ձեռք բերող Կողմի սահմանված քանակներին և հանվի փոխանցող Կողմի ունեցած միավորների քանակից:

12 ter. Կողմերի համաժողովը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի հանդիպում, ապահովում է, որ այն դեպքերում, երբ վերը նշված 12 bis կետում նշված շուկայական մեխանիզմների շրջանակում հավանություն արժանացած գործունեության արդյունքում ստացված միավորները 1-ին հավելվածում ընդգրկված Կողմերը օգտագործում են 3-րդ հոդվածի համաձայն քանակական արտանետումների սահմանափակման կամ կրճատման իրենց պարտավորության իրականացմանն օժանդակելու համար, այդ միավորների որոշակի մասն օգտագործվի վարչական ծախսերի փակման համար, ինչպես նաև՝ օգնեն այն զարգացող երկիր Կողմերին, որոնք առանձնապես խոցելի են կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցությունից, դրանց հարմարվելու առումով իրենց ծախսերը հոգալու համար, եթե այդ միավորները ձեռք են բերվել 17-րդ հոդվածին համապատասխան:

Ժա. Հոդված 4, կետ 2

Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության վերջում ավելացնել հետևյալ բառերը.

«կամ, համաձայն 3-րդ հոդվածի 9-րդ կետի, Բ հավելվածում կատարված ցանկացած փոփոխության ընդունման մասին իր փաստաթղթերն ի պահ հանձնելու օրը»:

Ժբ. Հոդված 4, կետ 3

Արձանագրության 4-րդ հոդվածի 3-րդ կետում՝
«7-րդ կետ» բառերը պետք է փոխարինվեն հետևյալով.
«, որին դա վերաբերում է»:

Հոդված 2. Ուժի մեջ մտնելը

Սույն փոփոխությունն ուժի մեջ է մտնում համաձայն Կիոտոյի արձանագրության 20-րդ և 21-րդ հոդվածների: